

ջաձեւ սանդղով մը՝ քարեղէն նեցուկներու վրայ հաստատուած անցքէ մը (որ հիմայ միայն երեք կտոր մայր փայտէ կազմուած է:) Այս մատրան վրայ կայ դիտանոց մը, որ ամենագեղեցիկ տեսք ունի. քաղաքին վրայ, եւ շատ աւելի հեռու՝ արեւելք եւ արեւմուտք: Այս դիտանոցէն կը մտցուի աշտարակին շինութեան ժամանակ վախճանի մը համար պատին մէջ շինուած խորունկ եւ անդուռն այր մը: Մատրան դրան քով կան գրեթէ երկու մեզր հեռու ուրիշ երկու քարեղէն դռնամարդակներ, որոնք՝ ուրիշ դուռ մ'ալ շինելու սահմանեալ էին անշուշտ. այս դռնամարդակներու վարի ծայրն ծաղկենկար քանդակեալ են՝ նման դրան կամարին կոփածոյ քարին: Այս երկու դռնամարդակներու անջրպետն ամուր պատով փակուած է, եւ ամբողջն այնպէս ծեփուած, որ մարդ հասնելու կը նշմարէ պատի վրայի այս դռնամարդակները: Այս որմով փակեալ դրան ինչ բանի ծառայելն անմեկնելի է, վասն զի այս փակ դուռն մատուոք չի տանիր. մատրան մէջ նոյն տեղն դրան հետք մը չկայ: Կարելի է որ այն դրան ետեւն, որ աշտարակին եկեղեցւոյ կողման անկեան վրայ կ'երեւայ, գաղտնի սենեակ մ'ըլլայ, ուր թանկագին իրեր պահուած ըլլան, եւ այս սենեկի դուռն ամուր պատով փակած ըլլան, շնչմարուելու չափ ծեփուած, եւ նաեւ այս դրան առջեւ գտնուող անցքը բարձող քարեղէն նեցուկներն կտորած ըլլան այն սենեկին գոյութեան ամէն հետքը ջնջելու համար: